community

The New Apostolic Church around the world

03/2025/AM

Նայել դեպի երկինք

Խմբագրական
Աստված խոսում է մեզ հետ

Ժամերգություն
Պատրաստ լինել մեծ եզրափակչին

Վարդապետական ուսմունք
Փրկություն և ազատում

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Աստված խոսում է մեզ հետ

Ժամերգություն

4 Պատրաստ լինել մեծ եզրափակչին

Մանկական անկյուն

10 Պետրոսն ուրանում է Հիսուսին

12 Այցելություն Ալֆրեդին՝ Փարիզում / Ֆրանսիա/

Տեսություն

16 Ինչ են նշանակում փրկությունն ու ազատումը

Ընդհանուր լուրեր

18 Տարվա կարգախոսը ոգեշնչում է

■ Շապիկի առջևի լուսանկարը՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա
■ Շապիկի ետևի լուսանկարը՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա

Աստված խոսում է մեզ հետ

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

իր արարչագործության մեջ մի առանձնահատուկ տեղ է տվել: Աստված խոսում է մարդկանց հետ: Նա չի խոսում սարերի, ծառերի կամ այծերի հետ: Միակ արարածը, որի հետ նա խոսում է, որպեսզի նրան իր կամքն իմանալ տա, դա մարդն է :

Աստված դա արել է բոլոր ժամանակներում: Առաջին մարդկանց հետ նա անմիջական էր խոսում: Ավելի ուշ նա շատ ուղիղ խոսեց նաև Աբրահամի հետ: Իսրայելի ժողովրդի հետ նա անմիջականորեն չէր խոսում: Դա կվախեցներ ժողովրդին վախ: Դրա համար էլ նա խոսում էր Մովսեսի հետ, եթե մի բան էր ուզում հաղորդել, իսկ Մովսեսը տեղեկացնում էր իսրայելացիներին: Ավելի ուշ Աստված խոսում էր մարգարեների միջոցով:

Հետո եկավ Հիսուս Քրիստոսը: Աստված մարդացավ: Հիսուսը ուղիղ խոսում էր մարդկանց հետ: Հետո, երբ Հիսուսը վերադարձավ իր Հոր մոտ, նա ուղարկեց Սուրբ Հոգուն և իր առաքյալներին: Նրանց նա խոստացավ՝ Ով ձեզ է ընդունում , ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ընդունում է ինձ ուղարկողին / Մատթ. 10,40/:

Աստված այսօր օգտագործում է տարբեր ուղիներ, որպեսզի դառնա մեզ : Աստված կարող է մեզ հետ խոսել Աստվածաշունչ կարդալու և Սուրբ Հոգու միջոցով, ով մեզ հետ խոսում է մեր մտքերում: Բայց, ամենից առաջ Աստված խոսում է առաքյալների միջոցով: Քարոզում Աստված հայտնում է մեզ, թե ինչ պետք է անենք փրկության հասնելու համար: Դրա համար էլ մեզ համար կարևոր է լսել այն խոսքը, որը քարոզվում է Աստծո կողմից ուղարկվածների միջոցով: Նրանք կան և մնում են որպես մեղավոր մարդիկ, այնուամենայնիվ, Աստված սրբացնում է նրանց, որպեսզի նրանք կարողանան Ավետարանը տեղեկացնել: Քարոզը կարող է ոչ կատարյալ լինել, բայց, եթե մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին, լսում ենք նրա պատգամը և որոշում ենք անել այն, ինչ նա մեզ ասում է, նա մեր մեջ արթնացնում է խաղաղությունը, ուրախությունն ու հույսը: Նա ուժեղացնում է մեր հավատը, հարստացնում է մեր գիտելիքները, սնում է մեր սերը և մեզ նախապատրաստում է Քրիստոսի գալստյանը:

Սրտանց ողջույններով՝

Ձեր՝ Ժան -Լյուք Շնայդեր

Պատրաստ լինել մեծ եզրափակչին

Լուսանկարները՝ Անդրեյ Լիֆանթիևի

2024-ի դեկտեմբերի 15-ին, Սուրբ Ծննդյան տոներից քիչ առաջ, գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ժամերգություն տոնեց Օմսկում / Ռուսաստան/

Ղուկաս 21,28

Եվ երբ սկսվի այս բանը լինել, վեր կացեք և ձեր գլուխները բաձրացրեք, որովհետև մոտ է ձեր փրկությունը:

Սրտնաց սիրելի քույր-եղբայրներ, ես պետք է ասեմ, որ հատուկ շնորհակալ եմ սիրելի Աստծուն, որ մենք այս ժամերգությունն այսօր կարողանում ենք միասին ապրել, և, որ ես մեկ անգամ ևս կարողացա գալ Ռուսաստան: Ես պարբերաբար առիթներ եմ ունենում հանդիպելու առաքյալներ Աքչուրինի և Լազարևի հետ, սակայն ինձ համար իսկապես սրտի մեծ ցանկություն էր նորից ձեզ հետ լինելու այս երկրում և միասնություն կազմելու իմ քույր-եղբայրների հետ: Եվ ես ուրախանում եմ փոքր երեխայի նման, որ սա հնարավոր եղավ: Խոսքը միայն իմ անձի մասին չէ, բայց ինձ համար կարևոր է, որ մենք միասին կարողանանք շարունակել նախապատրաստվել Հիսուս Քրիստոսի գալստյանը: Սա մեր միասնական նպատակն է, և ես ուրախանում եմ տեսնելով, որ նաև Ռուսաստանի իմ քույր-եղբայրներն են նախապատրաստվում:

Հիմա կարելի է ասել՝ ,, Այո, դու դա ասել ես հինգ տարի առաջ, երբ Ռուսաստանում էիր, իսկ Տեր Հիսուսը դեռ չի եկել: Ընդհանրապես, նա ե՞րբ է գալու: Ես դա չգիտեմ: Ես կարող եմ միայն ասել այն, ինչ ասում է Աստվածաշունչը՝ Նա գալու է, երբ ժամանակը լրանա: Սա այն է, ինչ մեզ ասել է սիրելի Աստված: Մի մտահոգվիր: Նա կգա, երբ ժամանակը լրանա:

Այն ժամանակ հրեաների մոտ էլ այդպես էր: Նրանք ունեին այն խոստումը, Աստծո հավաստիացումները, որ նա կլինի Մեսիան: Իսկ դա շատ երկար տևեց: Բայց Պողոս առաքյալն ասել է՝ ,, Երբ ժամանակը լրացավ, Հիսուսը ծնվեց,,: Իսկ ի՞նչ է նշանակում ,, երբ ժամանակը լրացավ,,: Դա չի նշանակում, որ սիրելի Աստված պետք է սպասի, մինչև այստեղ կամ այնտեղ ինչ-որ բան տեղի ունենա, և ապա բոլոր պայմանները կատարվեն: Աստված չպետք է սպասի, որ երկրի վրա ինչ-որ բան տեղի ունենա, որպեսզի նա կարողանա ուղարկել իր Որդուն: ,, Երբ ժամանակը լրանա,, նշանակում է պարզապես, որ, եթե Աստված որոշի, որ հիմա է ամեն ինչ որոշված, նա նրան կուղարկի: Սուրբ Հոգին ասել է մեզ՝ ,, Հիսուսը նորից է գալու,,: Իսկ աշակերտներն այն ժամանակ հարցրել են՝,, Այո, ե՞րբ է դա տեղի ունենալու: Ի՞նչ նշանների դեպքում մենք կարող ենք հասկանալ, որ Տեր Հիսուսը գալիս է,,- պատասխանը նույնն է՝ Երբ ժամանակը լրանա: Այսինքն, այնպես չէ, որ սիրելի Աստված պետք է սպասի, մինչև որ ինչ-որ բան տեղի ունենա երկրի վրա, ինչ- որ պայմաններ լինեն, մարդիկ կարգ ու կանոնի մեջ լինեն, որ սիրելի Աստված կարողանա ուղարկել իր Որդուն: Աստված կախված չէ այն բանից, ինչ տեղի է ունենում երկրի վրա: Նա նաև ինձ չի սպասելու: Նա ուղարկելու է իր Որդուն, երբ նա որոշի: Հավանաբար կլինի մի նշան, որից մենք կարող ենք հասկանալ, որ Տերը գալիս է: Իսկ Տերը ասել է ,, Ոչ, դուք չեք կարող դա իմանալ,,: Նա գալու է այն ժամանակ, երբ դու բոլորովին չէիր սպասում: Նա ոչ մի արտաքին նշան ցույց չի տալու: Դուք չեք կարող հաշվարկներ անել և ասել՝ Հիմա սա է տեղի ունեցել, և դա է տեղի ունեցել, հիմա կարող է Տերը գալ: Հիսուսն ասել է՝,, Ոչ մի մարդ չգիտի օրն ու ժամը, ոչ էլ կարող է հաշվարկել,,: Նա գալու է պարզապես մի լավ պահի: Այսինքն՝ չի լինելու արտաքին ոչ մի նշան, որից կարելի է ենթադրել ու ասել՝,, Հիմա պետք է Տերը գա,,: Քրիստոսի գալստյան ժամանակը կախված չէ այն բանից, թե ինչ տեղի կունենա երկրի վրա: Աստված Աստված է: Նա անում է հենց այն, ինչ ուզում է և երբ ուզում է: Նա կախված չէ մարդկանցից:

Հիմա ադուք հաստատ կասեք՝,, Այո, բայց Տեր Հիսուսն այն ամենը, ինչ տեղի է ունեցել վերջին շրջանում, թվարկել է Մատթեոսի Ավետարանում, Ղուկասի Ավետարանում: Դա այդպես է: Տեր Հիսուսը միշտ խոսել է վերջին շրջանից, վերջին ժամանակից, ինչ տեղ է ունենում, ինչ եղել է իր առաջ: Բայց, պետք է գիտակցել, թե ինչ նկատի ուներ Հիսուսը, երբ խոսում էր վերջին շրջանից, վերջին ժամանակից: Հիսուսի համար վերջին ժամանակը, վերջին շրջանը սկսվել է Հոգեգալուստով՝ Սուրբ Հոգով լցվելով: Հիսուսի համար դա վերջին ժամանակի սկիզբն է: Դա սկսվել է առաջին Հոգեգալստյան ժամանակ և դադարելու է Վերջին դատաստանի ժամանակ: Դա է Հիսուսի համար վերջին ժամանակը: Եվ, երբ նա խոսել է այն բանի մասին, ինչ տեղի է ունեցել մինչև իր գալը, նա նկարագրել է այն ամենը, ինչ տեղի է ունեցել առաջին Հոգեգալուստից սկսած, այն ժամանակից սկսած, երբ նա վերադարձել է իր Հոր մոտ: Եվ այսպես պետք է մենք հասկանանք նրա Ավետարանը: Ինչ նա նկարագրել է որպես վերջին ժամանակ, վերաբերում է բոլոր քրիստոնյաներին՝ եկեղեցու սկզբից մինչև եկեղեցու ավարտ: Նա ասել է՝,, Վերջին ժամանակում պատերազմ և ավերածություններ են լինելու,,: Այո, և դա հրեաները դա շատ արագ ապրեցին: Հռոմեացիները եկան և Երուսաղեմ քաղաքն ու տաճարը ավերեցին: Նա ասել է՝ ,, Վերջին ժամանակում քրիստոնյաները հալածվելու են,,: Տասը տարի անց քրիստոնյաները արդեն ապրեցին դա: Նրանք հալածվեցին: Հիսուսն ասել է՝ ,,Գալու են կեղծ մարգարեներ: Նրանք ասելու են՝ Քրիստոսն այստեղ է, Քրիստոսն այնտեղ

Անկախ նրանից, թե ինչ տեղի կունենա, այժմ ժամանակ է երկնքին նայելու

Վեր կաց, սպասիր Տիրոջը

է, ով մեծ հրաշքներ է անում,,: Եվ դա Պողոսն արդեն ապրել է, երբ մարդիկ էին գալիս, ովքեր առում էին՝ Մենք էլ ենք առաքյալներ և Ավետարանը պետք է այսպես հասկանանք: Քրիստոսը նաև մեզ հետ է: ,ՕՆա խոսել է բնական աղետների մասին: Նա խոսել է բազմաթիվ վատ հարաբերությունների մասին: Քույրեր և եղբայրներ, երբ մենք հայացք ենք գցում պատմությանը, նկատում ենք, որ սկզբից էլ այս ամենը եղել է: Իհարկե, յուրաքանչյուր սերունդ կարծում է, որ այն, ինչ կատարում է իր ժամանակներում, շատ վատ է, այսպես վատ երբեք չի եղել: Սա, սակայն, ես-ի դրսևորում է: Այս դեպքում ես պետք է միշտ ասեմ՝,, Լավ, այսօր վատ է, բայց պատկերացրու, եթե դու ապրեիր երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, եթե դու ստրուկ լինեիր 15-րդ դարում: Եթե դու ապրեիր մի ժամանակաշրջանում, երբ սովն էր տիրում և մարդիկ մահանում էին, որովհետև ուտելու ոչինչ չունեին: Եթե մի քիչ ազնիվ լինենք և ետ ու մեր շուրջը նայենք, կավելացնենք, այսօր այսպես վատ է, բայց եղել են ավելի վատ ժամանակներ: Եվ սա ապացույցն է այն բանի, որ չենք կարող ասել՝,, Քանի որ այսօր այսպես է, դրա համար էլ Տերը պետք է գա,,: Ինչ նկարագրել է Տեր Հիսուսը, միշտ կրկնվել է քրիստոնեության պատմության մեջ: Նա չի ասել՝,, Եթե սա տեղի է ունեցել, ուրեմն ես կգամ,,: Նա ասել է՝ ,,Եթե սա տեղի է ունեցել, ապա դուք պետք է այսպես ու այնպես ձեզ պահեք,,: Սա է տարբերությունը: Երբ նման բաներ են տեղի ունենում, ապա պետք ոտքի կանգնեք և վեր նայեք:

Սիրելի քույր-եղբայրներ, սա այսօրվա մեզ ուղղված պատգամն է, ինչպիսին որ եղել է քրիստոնեության յուրաքանչյուր ժամանակաշրջանում: Անկախ նրանից, թե ինչ է տեղի ունեցել աշխարհում, անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում քո կյանքում հիմա, այժմ ժամանակն է կանգնելու և դեպի երկինք նայելու: Եվ սա պատգամ է այսօր մեզ և Աստծո բոլոր զավակների համար ամբողջ աշխարհում: Հիմա, այս ժամանակաշրջանում, ոտքի կանգնիր և դեպի վեր նայիր:

Այսինքն՝ մենք չենք կարող Աստծուն դիմել և ասել՝, Այո, բայց այս հարաբերությունների



պարագայում ես չեմ կարող այլևս հավատարիմ մնալ,,: Աստված ասում է մեզ՝,, Կանգնիր հիմա և այսօր այս իրավիճակում, կանգնիր, ընկած մի մնա,,: Այլ խոսքերով՝ Մի դադարեցրու: Գուցե մենք հիասթափված ենք, քանի որ Տերը դեռ չի եկել: Մենք հիասթափված ենք, քանի որ աշխարհում իրավիճակը մեր սրտով չէ, կյանքը մեր սրտով չէ: Մենք հիասթափված ենք, քանի որ մեր եկեղեցու զարգացումը այլ կերպ էինք պատկերացնում: Հիշենք աշակերտներին, երբ Հիսուսը նրանց ասաց, որ նա ձերբակալվելու է և մահանալու: Այդ ժամանակ նրանք նրա հետ գնացել էին Գեթսեմանի պարտեզը և տրտմությունից քնել էին, -այսպես է ասվում Աստվածաշնչում: Նրանք այնքան տխուր էին և այնպես հիասթափված, որ քնել էին: Իսկ դա ամենամեծ ռիսկն էր: Մենք ամեն ինչ բոլորովին այլ ենք պատկերացնում: Իսկ սիրելի Աստված մեզ չի տալիս այն, ինչ մենք ենք ուզում: Եվ իրավիճակը բոլորովին այլ է դառնում, քան մենք պլանավորել էինք: Մենք ամեն ի՛չ այլ կերպ էինք պատկերացրել: Ամեն ինչ այլ կերպ է, ու հիասթափվում են, իսկ դա արդեն ռիսկ է, որ տխրությունից և հիասթափությունից քուն մտնեն: Բայց, Սուրբ Հոգին ասում է՝,, Ոչ, կանգնիր: Այսօրվա իրավիճակը պատճառ չէ քնելու համար: Ոտքի կանգնիր, շարունակիր, մի դադարեցրու,,: Ոտքի կանգնիր նշանակում է՝ սպասիր Տիրոջը:

Այո, կան տարբեր իրավիճակներ: Այո, կան տարբեր մարդիկ, օրինակ, մեզ մոտ՝ ընտանիքում: Մեր ընտանիքի մի մասը, եթե ինչ որ բան պիտի անի, չի շտապում այդ անել: Եվ, գործնականում նրանք միշտ ուշանում են: Մեր ընտանիքի մեկ այլ մասն արդեն կես ժամ առաջ պատրաստ վիճակում է տվյալ գործն անելու: Ըստ այն կարգախոսի, որ երբեք չենք կարող իմանալ, թե դեռ ինչ կպատահի, եկեք կես ժամ առաջ պատրաստ լինենք: Ես հիմա չեմ ասում , թե մի մասը վատն է, իսկ մյուս մասը լավն է: Իհարկե, իմ կինը լավի շարքում է, ես՝ վատի շարքում, բայց հոգևոր առումով իմ մտահոգությունն այն է, որ ես երբեմն վախենում եմ, երբ Աստծո զավակները աթոռին նստած ասում են՝,, Այո, մենք սպասում ենք Տիրոջը, բայց տեսնենք, թե երբ է գալու,,: Սուրբ Հոգին մեզ ասում է՝,, Ոտքի կանգնիր, սպասիր Տիրոջը,,: Դա նշանակում է, որ պետք է որոշակի լարվածություն առաջանա: Տերը գալու է շուտով, ես պետք է ինչ-որ բան անեմ: Ես պետք է պատրաստ լինեմ, ոչ թե պարզապես ասեմ՝ ,, Այո, ես հավատում եմ, որ Տերը գալիս է: Ինչ-որ ժամանակ նա գալու է,,: Ոչ, մենք պետք է կենդանի հույս ունենանք, որոշակի լարվածություն ապրենք: Տերը գալու է; Ես պետք է շտապեմ: Ես ուզում եմ պատրաստ լինել, երբ նա գա:

Սուրբ Հոգին մեզ ասում է՝,, Այո, որպես նախապատրաստություն դու պետք է հաշտվես քո մերձավորի հետ և ներես նրան,,: ,,Այո, ես գիտեմ,, -բայց մեկ տարի անց դեռ չի հաշտվում նրա հետ: ,,Այո, ես գիտեմ, ես պետք է պատրաստ լինեմ: Ես այս ինչ բանը դեռ պետք է հաղթահարեմ, ես պետք է փոխվեմ: Խնդիրը ես պետք է դեռ կարգավորեմ,,: Բայց վեց ամիս անց այս ուղղությամբ ոչինչ չի լինում: Պետք է ինքն իրեն հարց տա՝,, Այո՞, դու սպասո՞ւմ ես Տիրոջը: Դու իսկապես հավատո՞ւմ ես, որ նա կարող է ցանկացած պահի գալ,,: Դու պետք է շատ պարզ ասես՝ Ակնհայտ՝ ոչ: Դու ոչինչ չես ասել: Դու մնացել ես քո աթոռին նստած: Մերձավորի հանդեպ ոչ մի քայլ չես արել և ընդհանրապես ոչինչ չես ձեռնարկել, որ քեզ փոխես: Գուցե դու հավատում ես Քրիստոսի գալստյանը, բայց դու չես սպասում դրան: Կանգնիր, նախապատրաստվիր: Ինչ-որ բան արա: Հաղթահարիր, փոխվիր, հաշտվիր, ներիր: Այլ խոսքերով՝ վերջապես արա այն, ինչ սիրելի Աստված քեզնից պահանջում է: Մեկ անգամ ևս, երբ այդ կենդանի հույսը, այդ լարվածությունն ապրում է մեր մեջ, ապա մենք պետք է արդեն այսօր պատրաստ լինենք և ամեն ինչ անենք, որ արդեն այսօր անենք այն, ինչ սիրելի Աստված պահանջում է մեզնից: Ես ազնիվ կլինեմ և կասեմ, որ սա ես քարոզում եմ նաև ինքս ինձ: Ես էլ պետք է անեմ այն, ինչ քարոզում եմ: Ես պետք է ավելացնեմ, երբեմն դա մի քիչ ավելի երկար է տևում, մինչ ես ինքս դա կանեմ: Եվ ես ազնվորեն ասում եմ, ես պետք է ավելի լավը դառնամ: Բայց, գլխավոր առաքյալ լինելը ինձ ոչ մի առավելություն չի տալիս Տիրոջ օրվան նախապատրաստվելու համար: Եթե ես դա չանեմ, ես այդ ժամանակ այդտեղ չեմ լինի: Դա իմ պաշտոնի հետ ոչ մի կապ չունի: Մենք բոլորս պետք է նախապատրաստվենք: Կանգնիր, նայիր դեպի վեր:

Շրջանային առաքյալ Թովմաս Դոյբել

Առաքյալ Գերդ Քիսելբախ

Շրջանային առաքյալ Ռյուդիգեր Քրաուզե

Առաքյալ Մարատ Աքչուրին

Հիսուսն անդրադառնում է Եսայի մարգարեի խոսքին: Եսային ասում է՝,, Պատրաստվիր և լույս դարձիր,,: Այսօրվա լեզվով այսպես կասվեր՝,, Պատրաստվիր, տեսանելի դարձիր,,: Քրիստոնյաների համար ևս ռիսկային է , եթե ուզում են թաքնվել: Չեն ուզում աչքի ընկնել: Որպեսզի ոչ մի խնդիր չունենան, պարզապես ոչինչ չեն անում: Ինչ մյուսներն են անում, դա են անում: Թույլ են տալիս իրենց քշվել հոսքանից: Չեն ուզում աչքի ընկնել: Ուզում են ինչքան հնարավոր է հարմար լինի իրենց համար: Հիսուսն ասում է մեզ՝,,Ոչ, այդպես չի լինի: Դու չես կարող պարզապես գործել, դու պետք է խոստովանես քո հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ,,: Եվ, եթե քո հարևանը ինչ-որ բան է անում, որը համահունչ չէ Հիսուս Քրիստոսին, դու պետք է ասես՝ Ես դա չեմ կարող անել: Ես հիմա դա չեմ կարող ասել: Ես դա հիմա չեմ կարող անել: Ինչու՞ ոչ: Դա բոլորն են անում:,, Ոչ, ես քրիստոնյա եմ, քրիստոնյան չի կարող իրեն այդպես պահել,,: Եվ դա երբեմն շատ կոնկրետ: Այս դեպքում ևս Սուրբ Հոգին ասում է մեզ՝ ,, Պատրաստվիր, խոստովանիր Հիսուս Քրիստոսի հանդեպ քո հավատը: Թույլ մի տուր քեզ ինչ-որ բան ստիպեն: Դու քրիստոնյա ես: Կան բաներ, որ դու չես կարող անել: Կան բաներ, որ դու չես կարող ասել: Պատրաստվիր, ցույց տուր, որ դու քրիստոնյա ես,,: Դա չի նշանակում, որ մենք պետք է ողջ բնակչությանը վերափոխենք, բայց եկեք ամրագրենք՝ Ես քրիստոնյա եմ: Պատրաստվեք, բարձրացրեք ձեր գլուխները: Դա նշանակում է՝ նայել դեպի վեր:

Այո, դեռ այդպես է, մարդիկ հակված են միշտ նայել այն բանին, ինչը ճիշտ չէ: Ես հաճախ ասել եմ՝,, Մի նայիր այն բանին, ինչ սատանան է անում, նայիր այն բանին, ինչ Աստված է անում,,: Եկեք միշտ վեր նայենք: Ի՞նչ կա վերևում: Վերևում մեր Աստվածն է, մեր Հայրը: Հիսուսն ասել է՝,, Իմ Հայրն ավելի մեծ է, քան ամեն ինչը: Սիրելի քույր-եղբայրներ, դա ես ցանկանում է մեր բոլորի սրտերում գրել: Մեր Հայրն ավելի մեծ է, քան ամեն ինչը: Դա մի մոռացիր, նայիր նրան: Նա միշտ միջամտում է իրավիճակներին: Ոչինչ չի պատահում առանց նրա թույլտվության, և նա հոգ է տանում այն բանի համար, որ ոչ մի բան չխանգարի փրկության իր պլանին: Ինչ էլ ոգին անի մեզ հետ, ոչինչ չի կարող Աստծո պլանը խանգարել: Մեր Հայրն ավելի մեծ է, քան ամեն ինչը: Կան իրավիճակներ, որոնք մենք բացարձակ չենք հասկանում: Այդ դեպքում եկեք վեր նայենք: Մեր Հայրն ավելի մեծ է, քան ամեն ինչը: Անգամ, եթե ես նրան չեմ հասկանում, ես գիտեմ, որ նա ոչ մի սխալ չի անում: Նայիր Հիսուս Քրիստոսին: Նա չարին վերջնականապես հաղթել է: Նա հաղթել է մեղքին ու մահին: Եվ նա ընտրել է մեզ: Նա ուզում է, որ մենք հավերժ իր հետ լինենք: Նա ուզում է մեզ իր մոտ տանել: Նաև այսօրվա իրավիճակում դեպի վեր նայիր: Հիսուս Քրիստոսը, ով հաղթել է մեղքին ու մահին, ով հաղթել է չարին, ուզում է, որ դու նրա մոտ գնաս: Եվ սա է քո գոյության իմաստը: Անգամ, եթե ամեն ինչ ծուռ է քո կյանքում, հիշիր, որ դա է նպատակը: Նա ընտրել է քեզ: Անգամ, եթե դու բոլոր մարդկանց կողմից արհամարհվում ես, ցավ է պատճառում, երբ նկատում ես, որ չկա շնորհակալություն, չկա գնահատում, չկա հարգանք: Երբեմն այն տպավորությունն է լինում, որ ոչ ոքի կողմից չես ընդունվում: Նայիր դեպի վեր: Այնտեղ կա մեկը, ով մահացել է քեզ համար: Նա քեզ այնպես է գնահատում, նա քեզ այնպես է սիրում: Եվ, եթե ոչ մի մարդ քեզ չի տեսնում, անգամ քո ամուսինը, քո կինը, քո երեխաները այլևս քեզ չեն հարգում, երբ բոլորն ասում են՝,, Նրա հետ ոչ մի բան չեմ անի,, ; նայիր դեպի վեր: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, քեզ համար ներկա է, անձնապես քեզ համար է զոհաբերվել, քանի որ սիրում է քեզ: Մեկ անգամ ևս, շատ ցավալի կարող է լինել, երբ մարդկանց

կողմից չես գնահատվում, հիասթափվում ես սեփական ընտանիքից: Գուցե արհամարհվում ես համայնքի կողմից, այն տպավորությունն ես ունենում, որ քեզ վրա ուշադրություն չեն դարձնում: Ես, անշուշտ, նորից եմ կրկնում՝ նայիր դեպի վեր: Հիսուս Քրիստոսը քեզ համար է մահացել: Նա մասնակիցն է քո տառապանքի և քո ուրախության: Նա անտարբեր չէ: Նրա համար քո փոքր հոգսը կարևոր է: Նա կիսում է քո ամենափոքր ցավը: Այսօրվա իրավիճակում նայիր դեպի վեր, դեպի Աստված, դեպի Հայրը, նայիր Հիսուս Քրիստոսին: Նայիր դեպի վեր: Սուրբ Հոգին քեզ ցույց է տալիս ճանապարհը, որը դու պետք է գնաս: Եվ դա ճիշտ ճանապարհն է այսօրվա իրավիճակում:

Բայց նաև՝ նայիր դեպի վեր, Հիսուս Քրիստոսին, առաջին մարդուն, ով գնացել է երկնային արքայություն, ընդունիր նրան որպես օրինակ: Ի՞նչ պետք է հիմա ես անեմ: Ինչպե՞ս պետք է ես ինձ հիմա պահեմ: Հետևիր Հիսուս Քրիստոսի օրինակին: Եվ, երբ ամեն ինչ երերում և կոտրվում է՝ նայիր դեպի վեր: Դա է իմ օրինակը: Այդպես եմ ուզում ես լինել: Այդպես եմ ուզում ես դառնալ: Նաև ես, երբ ամեն ինչ ապրում եմ, ինչ նկարագրել է Հիսուսը, Հիսուս Քրիստոսը կա և մնում է մեր օրինակը: Մենք պետք հասունանանք Հիսուս Քրիստոսի կերպարի նմանությամբ: Իսկ հիմա նայիր դեպի վեր, թե ինչ է պատրաստել Հիսուս Քրիստոսը քեզ համար՝ հավիտենական կյանք իր արքայությունում, լիակատար միասնություն Աստծո հետ: Անկախ այն բանից, թե դու ինչ ես ապրել, այսօր արժե հավատարիմ մնալ: Աստծո փառահեղությունն այնքան մեծ է, որ դու չես հիշելու այն բաների մասին, ինչ ապրել ես երկրի վրա: Դա հեշտ է ասել, բայց, երբ ես դա ասում եմ, մտածում եմ որ շատ քույր-եղբայրներ ամբողջ աշխարհում դա ապրել են: Ես մտածում եմ որոշ եղբայրների, որոշ քույրերի մասին, որոնք սարսափելի կյանք և սարսափելի վախճան են ունեցել: Ես չեմ ուզում դա նշել: Ես մտածում եմ, բայց եթե նրանք Հիսուսի մոտ են, ամեն ինչ արդեն մոռացել են: Եվ, իսկապես, Աստծո փառահեղությունն այնքան մեծ է, որ նրանք այլևս դրա մասին չեն հիշում:

Փառահեղությունը, որն ուզում է Հիսուս Քրիստոսը մեզ տալ, ավելի մեծ է, քան այն ամեն ինչը, ինչ մտածում ենք մենք: Իսկ դա էժանագին մխիթարություն չէ, այո դա արդեն լավ է: Դա աստվածային խոստում է: Ճշմարտության Աստվածը մեզ ասում է՝ ,, Ես քեզ երաշխավորում եմ, որ այն, ինչ ուզում եմ քեզ տալ, շատ է, շատ ավելի մեծ, քան բոլոր տառապանքները, որ դու ապրել ես,,: Մենք ապրում ենք վերջին ժամանակներում: Մենք գործ ունենք այն ամենի հետ, ինչ նկարագրել է Հիսուսը: Բայց այս ժամանակի մեջ մենք գիտակցում ենք, որ մեր փրկությունը մոտեցել է: Մենք ուզում ենք կանգնել, ակտիվորեն սպասել Տիրոջը, նախապատրաստվել ու միշտ նայել դեպի վեր: Իսկ հետո մենք ապրելու ենք դա: Մեր Տերը շուտով գալու է: Ամեն:

Հիմնական մտքեր

Քրիստոսի հետևորդներն առճակատվում են ճնշումների: Այս դժվարությունները հիասթափեցնում են մեզ: Մենք շարունակում ենք նախապատրաստվել Հիսուսի գալստյանը և ղեկավարվում ենք նրա օրինակով:

ՊԵՏՐՈՍՆ ՈՒՐԱՆՈՒՄ Է ՀԻՍՈՒՍԻՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 22, 24-62-Ի

Երբ Հիսուսն աշակերտների հետ ուտում էր Պասեքի ընթրիքը, ասաց նրանց, որ աշակերտներից մեկը դավաճանելու է իրեն: Աշակերտները հարցրեցին, թե ով է լինելու այդ մեկը: Վիճաբանություն առաջացավ, թե ով է իրենցից ամենամեծը: Հիսուսն ասաց տասներկուսին, որ նրանք պետք է ծառայեն միմյանց:

Հիսուսն ասաց Պետրոսին. ,, Սատանան ուզեց ձեզ բաժան-բաժան անել: Բայց ես աղոթեցի քեզ համար, որպեսզի քո հավատը չպակասի, և դու, երբ վերադառնաս ինձ, հաստատես քո եղբայրներին,,: Պետրոսը պատասխանեց նրան. ,, Տեր , պատրաստ եմ քեզ հետ գնալ և բանտ, և դեպի մահ,,:
Ապա Հիսուսն ասաց. ,, Պետրոս, այսօր դեռ աքաղաղը կանչած չպիտի լինի, մինչև որ դու երեք անգամ ուրանաս՝ ասելով՝ թե ինձ չես ճանաչում,,:
Պասեքի ընթքրիքից հետո Հիսուսը գնում է Ձիթենյաց լեռը՝ Գեթսեմանի պարտեզ, աշակերտները հետևում են նրան: Նա մի քայլ առաջ է գնում նրանցից, որպեսզի աղոթի: Աշակերտներն էլ պետք է աղոթեն, որ չտկարանան: Հիսուսը խնդրում է. ,, Հայր, եթե կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրու, բայց ոչ թե իմ կամքը, այլ քոնը թող լինի,,:
Մի հերշտակ գալիս և ուժ է տալիս նրան: Հիսուսն ավելի եռանդուն է աղոթում: Նա պայքարում է մահի դեմ: Նրա քրտինքը արյան կաթիլների նման թափվում է գետնին:
Ապա նա ոտքի է կանգնում և գնում աշակերտների մոտ:: Տրտմությունից նրանք այդ ընթացքում քնել էին: Հիսուսն արթնացնում է նրանց, նրանք պետք է աղոթեն:

Այդ ընթացքում Հուդային, ով մեկն էր տասներկուսից, Հիսուսի հակառակորդները բերում են պարտեզ: Հիսուսին բռնում են և տանում քահանայապետի տուն: Պետրոսը հեռվից գնում է նրա հետևից:
Տան բակում մարդիկ տաքանում էին կրակի շուրջը, Պետրոսն էլ նստեց նրանց կողքին: Մի աղախին հայացքը սևեռեց նրան և ասաց. ,, Սա էլ էր նրանցից, որ նրա հետ էին,,: Պետրոսն ուրացավ և ասաց. ,, Ես նրան չեմ ճանաչում, ով կին,,: Եվ քիչ հետո մեկ ուրիշը տեսավ նրան և ասաց. ,, Դու էլ նրանցից ես,,: Պետրոսն ասաց. ,, Ով մարդ, ես նրանցից չեմ,,: Երբ մի ժամ էլ անցավ, մեկ ուրիշը վիճում էր և ասում. ,, Ճիշտ որ սա էլ նրա հետ էր, որովհետև գալիլիացի է,,: Պետրոսն ասաց. ,, Ով մարդ, չգիտեմ ադ ի՞նչ ես խոսում,,: Եվ նույն պահին, մինչ նա այս ասում էր, աքաղաղը կանչեց:
Հիսուսը դարձավ և նայեց Պետրոսին, և Պետրոսը հիշեց Տիրոջ խոսքը, որ ասել էր իրեն. ,, Դեռ աքաղաղը չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս, թե ինձ չես ճանաչում,,: Պետրոսը դուրս ելնելով՝ դառնորեն լաց եղավ:



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԼՖՐԵԴԻՆ՝ ՓԱՐԻԶՈՒՄ / ՖՐԱՆՍԻԱ/

Գիտեք, որ Էյֆելյան աշտարակը կառուցվել է 1889-ին ինժեներ Գուստավ Էյֆելի կողմից համաշխարհային ցուցահանդեսի համար, ցույց տալու, թե երկաթով ինչ բարձր շինություն կարող են կառուցել, և, որ ի սկզբանե մարդիկ բոլորվին չէին ցանկանում Փարիզում ունենալ այդ աշտարակը: Քառասուն տարի շարունակ այն այդ ժամանակվա իր 312 մետր բարձրությամբ աշխարհի ամենաբարձր շինությունն էր: Միայն 1930-ին Նյու Յորքում կառուցվեց բարձրահարկ շենք, որն ավելի բարձր էր: Այսօր այդ աշտարակը Փարիզի խորհրդանիշն է: Շատ մարդիկ են այստեղ գալիս և լուսանկարվում, ինչպես ես:

Ես Ալֆրեդն եմ: Ես ապրում եմ Պանտենում, դա Փարիզի հյուսիս-արևելյան արվարձանն է: Լուսանկարն արվել է իմ վերջին ծննդյան օրը: Այստեղ դուք կարող եք տեսնել, թե ես քանի տարեկան եմ:

Այստեղ դուք ինձ տեսնում եք իմ հայրիկի՝ Անտոնի, իմ մայրիկի՝ Կատյայի և իմ քույր Դարինայի հետ: Նա երեք տարեկան է: Մենք իրար շատ լավ ենք հասկանում, հաճույքով խաղում ենք միմյանց հետ:

Ժամանակ առ ժամանակ մենք այցելում ենք թանգարաններ և լինում ենք Փարիզի հայտնի խորհրդանիշի մոտ: Օրինակ, այստեղ դուք ինձ տեսնում եք Լուվրում: Թանգարանը հռչակավոր է բակում գտնվող ապակեպատ բուրգերով , որոնք տարածվում են նաև դեպի շենքի ներսի հատված, և իտալացի արվեստագետ Լենարդո դա Վինչիի Մոնա Լիզա կտավով:

Հմմ, համեղ է: Ես սիրում եմ կրեպներ: Դուք հաստատ ծանոթ եք դրան: Բայց դուք գիտե՞ք թե ինչ է կրոկ մոնսիեն: Դա ֆրանսիական սենդվիչ է պանրով, ապուխտով և բեշամել-սոուսով: Այն ավելի շատ քանակի պանրով թխվում է ջեռոցում: Շատ համեղ է:

Խոսում ենք ուտելիքի մասին: Ֆրանսիայում մենք ունենք մի գեղեցիկ ավանդույթ՝ հունվարին՝ երեք թագավորների տոնի օրը, թխում են կլոր, հարթ թխվածք՝ թագավորական տորթ, որը լցված է լինում նշի կրեմով և մեջը դրվում է մի փոքրիկ կերամիկական ֆիգուր: Ում ընկնում է այդ ֆիգուրով թխվածքի կտորը, նա մեկ օրով դառնում է թագավոր կամ թագուհի և կրում է թղթե թագ: Այս տարի այդ տոնը մենք տոնեցինք համայնքի հետ միասին:

Իմ մայրիկի և քրոջս հետ ես կիրակի օրերին գնում եմ ժամերգությունների Փարիզի կենտրոնի համայնքում: Այստեղ դուք տեսնում եք եկեղեցու մուտքը: Իմ քույրը հաճախում է նախակիրականօրյա դպրոց, իսկ ես՝ կիրակնօրյա դպրոց:

Մենք երգում ենք նաև մանկական երգչախմբում: Անցած տարի Աղվեսնի տոնին մենք ելույթ ունեցանք:

Ես սովորում եմ տարրական դպրոցի՝ ֆրանսիական կրտսեր դպրոցի երրորդ դասարանում: Իմ սիրելի առարկան աշխարհագրությունն է, քանի որ ինձ համար հետաքրքիր են այլ երկրները:

Նկարչությունը ես արտակարգ բան եմ համարում: Այստեղ դուք ինձ տեսնում եք նկարչության դասընթացի ժամանակ: Դուք էլ ե՞ք հաճույքով նկարում:

Աղբյուրը՝ Մենք՝ երեխաներս, հրատարկությունը 04 2025, լուսանկարները՝ մասնավոր; ChonnieArtwork/stock.adobe

Ինչ են նշանակում փրկությունը և ազատումը

Հիսուս Քրիստոսը հիմնել է իր եկեղեցին և ուղարկել է իր առաքյալներին, որպեսզի մարդկանց համար հնարավոր դարձնեն լիակատար փրկությունը: Դրա համար անհրաժեշտ է ճիշտ հասկանալ, թե ինչումն է կայանում այդ փրկությունը:

Ձևավորումները՝ Սերգեյ Պավլովսկիի //stock.adobe

,,Փրկություն,, հասկացությունը ընդգրկում է տարբեր ասպեկտներ: Հին և Նոր կտակարանները խոսում են ազատության, փրկության, պահպանության, ներման, հաղթանակի, բայց և ազատման մասին: Այս բազմաշերտությունը երևում է նաև պատմության ընթացքում այն ձևով, թե ինչպես են քրիստոնյաները, նաև մեր եկեղեցում, փրկությունը հասկացել: Կախված ժամանակից և վայրից, որի ընթացքում նրանք ապրել են, շեշտել են փրկության այն ասպեկտը, որն ավելի է համապատասխանել նրանց սպասումներին: Այդ նույն ֆենոմենը երևում է նաև այսօր: Մեր իրավիճակներից կախված՝ մենք փրկությունը տեսնում ենք ամենից առաջ տառապանքից ազատման մեջ՝ որպես միջոց սպառնալիքից փախչելու կամ որպես հնարավորություն սիրելի մարդուն նորից տեսնելու:

Բոլոր այս տեսակետները հիմնավորված են և նախընտրելի: Բայց մենք իրավունք չունենք երբեք էականը մեր աչքից կորցնել, այն է՝ Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի և Ազատողի կամքն ու գործունեությունը:

Ազատություն և պահպանություն

Սահմանման համաձայն փրկությունը միշտ գալիս է Աստծուց: Աստված միջամտել է Իսրայելի ժողովրդի պատմությանը, որպեսզի նրանց եգիպտական լծից ազատի: Աստծո Որդին երկիր է եկել, որպեսզի մեզ ազատի մեղքի ստրկությունից և բացի մուտքը դեպի Աստված: Հիսուս Քրիստոսը նորից է գալու, որպեսզի ընտրյալներին իր արքայություն տանի:

Մեր եկեղեցում եղել են ժամանակներ, երբ Տիրոջ գալուստն ամենից առաջ դիտարկվել է որպես ազատություն և պահպանում՝

- Տերը նորից գալու է, որպեսզի մեզ ազատի տառապանքներից;
- նա մեզ պահպանելու է մեծ տխրությունից, ճնշման այդ ժամանակաշրջանից, երբ չարը երկրի վրա հասնելու է իր գագաթնակետին,
- նրանք, ովքեր առաջին հարությանը մասնակցություն են ունենալու, պետք է Վերջին դատաստանի ժամանակ Աստծու առաջ չերևան:

Որպեսզի իր գալստյան ժամանակ ընդունվենք Քրիստոսի կողմից, պետք է հորդորել հավատացյալներին՝ ընդունելու եկեղեցական խորհուրդները և հավատարիմ մնալու առաքյալների ծառայությանը:

Այս գիտակցությունը միշտ էլ կարևոր է: Այնուամենայնիվ, հորդորվում է այն Ավետարանի ընդգրկուն համատեքստով դիտարկել: Ազատության և պահպանության վրա կենտրոնանալը, որպես միակ ասպեկտ, բերում է մի քանի ռիսկեր՝

- հավատացյալը կարող է գայթակղվել՝ իրեն մեկուսացնելու արտաքին աշխարհից - նրա համար կարևոր է հավատարիմ մնալը, որպեսզի կանխատեսված աղետներից խուսափի: Շրջապատի մարդկանց ճակատագիրը մղվում է ետին պլան;
- առաքելական աշխատանքը այլևս բացառապես մոտիվացված չի լինի մերձավորի հանդեպ սիրով, այլ այն ցանկությամբ, որ ինչքան հնարավոր է արագ ազատվեն երկնային տառապանքներից / ,, …երբ վերջին հոգին կնքվի…,,/;
- եկեղեցական խորհուրդները կարող են թյուրիմացաբար ըմբռնվել՝ որպես ինքնանպատակ մի բան - նրանց ընդունումը երաշխավորում է փրկությունը;
- կյանքը երկրի վրա ներկայացվի բացասական - երկիրը տառապանքների վայր չէ, որից արժե ինչքան հնարավոր է արագ հեռանալ:



Հավիտենական կյանք Աստծո հետ միասին

Երբ Հիսուս Քրիստոսը խոսում էր փրկության մասին, նա հաճախ էր օգտագործում ,, հավիտենական կյանք,, հասկացությունը: Հավիտենական կյանքն ավելին է, քան՝ անմահությունը: Հայր Աստվածը, Որդի Աստվածը և Սուրբ Հոգի Աստվածը մարդուն ստեղծել է իր նմանությամբ և նրա համար երաշխավորել է իր հետ միասնություն կազմելը: Մարդը մեղքի մեջ ընկնելով պատճառով դուրս է մնում այդ միասնությունից: Աստծո փրկարար գործունեությունը նպատակաուղղված է մարդուն ունակ դարձնել իր տեղը Աստծո մոտ նորից գտնելու: Հիսուսի կողմից խոստացված հավիտենական կյանքը կայանում է Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ միասնության մաս կազմելու մեջ: Աստծո հետ միասնության մեջ լինել չի նշանակում ,, Աստված,, լինել: Աստծո արքայությունում փրկվածները մնալու են որպես Աստծո կողմից ստեղծվածներ, Աստված միշտ վեր է լինելու ամեն ինչից և բոլորից: Բայց, նրանք հավիտյան և կատարյալ ներդաշնակության մեջ են ապրելու նրա հետ: Նրանք նրան հավերժ երկրպագելու են, գավաբանելու են և անդադար Աստծո արքայության նոր ասպեկտներ են հայտնաբերելու:

Տերը հստակեցնում է այն պայմանները, որոնք մենք պետք է կատարենք հավիտենական կյանք մուտք գործելու համար: Մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին, վերստին ծնվենք ջրով և հոգով, ինչպես նաև ընդունենք Քրիստոսի մարմինն ու արյունը: Այս նախադրյալներն անհրաժեշտ են, բայց բավարար չեն: Խորհուրդների ընդունումը մեզ հնարավորություն է տալիս հասնելու Աստծո հետ հավիտենական միասնության, սակայն, այն չի երաշխավորում մեր վերջնական ավտոմատ մուտքը նրա մոտ: Մենք պետք է եռանդուն նախապատրաստվենք նաև Հիսուսի գալստյանը: Այդ նախապատրաստությունը կայանում է նրանում, որ մեզ սրբացնենք- այսինքն՝ մեզ թույլ տանք սրբանալ Աստծո կողմից: Երբ մենք թույլ ենք տալիս Սուրբ Հոգուն ներգործել մեզ վրա, նա մաքրում է մեզ, ուժ է տալիս մեզ՝ մեղքը մերժելու և սովորեցնում է մեզ՝ մերժել այն ամենը, ինչը մեզ հեռացնում է Աստծուց:

Նորառաքելական քրիստոնյաները Տիրոջ գալստյանը չեն սպասում, որպեսզի փախչեն այս երկրից: Համենայն դեպս, նրանք իրենց երկրային գոյությունը չեն ընդունում որպես ողբի հովիտ: Նրանց կյանքը երկրի վրա ողորմածության ժամանակաշրջան է, որը Աստված երաշխավորում է նրանց, որպեսզի նրանք ուրախության և տառապանքի պահերին կարողանան նախապատրաստվել իր հետ միասնության համար: Նրանց համար առաջին հարությունն ավելին է, քան փախուստը, այն լիակատար ավարտ է:

Միասնություն Աստծո և մարդկանց հետ

Աստծո հետ միասնության մեջ լինելը նշանակում է լցված լինել Աստծո կյանքով և գտնվել նա կամքի ներքո: Աստվածային կյանքի էությունը սերն է: Եթե մենք ուզում ենք Հիսուս Քրիստոսի հետ միասին լինել, ինչպես նա է Հոր հետ միասին, մենք պետք է Քրիստոսի սերն ունենանք մեր մեջ:

Նոր կտակարանը պարզաբանում է, որ աստվածային կյանքը անբաժան կապված է մերձավորի հանդեպ սիրով: Հիսուսը մերձավորի հանդեպ սերը նույնքան է արժևորում, ինչպես Աստծո հանդեպ սերը: Նա աղոթում է իր յուրայինների միասնության համար: Նա հորդորում է աշակերտներին՝ իրար սիրել և իրար ծառայել:

Աստծո հետ հավիտյան ապրելու համար նախապատրաստվել նշանակում է նաև նախապատրաստվել մյուսների հետ միասնության մեջ ապրելուն: Մարդիկ իրենք իրենցով ի վիճակի չեն ներդաշնակ ապրել միմյանց հետ: Նրանք նախ պետք է Քրիստոսով նոր արարածներ դառնան, լցվեն Աստծո սիրով և առաջնորդվեն Սուրբ Հոգով: Մարդկանց միջև կատարյալ միասնությունը հնարավոր է միայն Աստծո արքայությունում, երբ բոլորը ազատված կլինեն մեղքից և մարդկային անկատարություններից: Բայց, հենց այսօր մենք պետք է սովորենք իրար մետ միասնության մեջ ապրել:

Հավիտենական կյանքի համար նախապատրաստությունը միայնակ չի կարող հաջողել: Այն միայն իմաստ կունենա, երբ տեղի ունենա նրանց հավաքույթում, ովքեր ձգտում են Աստծո հետ հավիտենական միասնության:

Ժամերգության դերը

Ժամերգություն կարևոր տեղ է գրավում հավատացյալների կողմից Տիրոջ գալստյանը նախապատրաստվելու մեջ: Ժամերգությանը մասնակցելու միջոցով հավատացյալը առաջին հերթին ինքն է նախապատրաստվում: Նա ուժեղացնում է իր անձնական հարաբերությունը Աստծո հետ: Նա ջանում է մաչեմապես և հոգեպես դուսր գալ իր առօրյայից, որպեսզի հանդիպի Աստծո հետ: Սուրբ Հոգով ոգեշնչված քարոզը ուժեղացնում է նրա հավատը Հիսուս Քրիստոսի մոտալուտ գալստյան հանդեպ: ,, Հայր մեր,, աղոթքում հավատայալը արտահայտում է իր ցանկությունը Աստծո հետ միասնության մեջ լինելու- ,,քո թագավորությունը գա, քո կամքը լինի,,: Աղոթքը ազատում է նրան իր մեղքի բեռից: Սուրբ Հաղորդության տոնակատարությանը արժանապատիվ մասնակցությունը ուժեղացնում է նրա հույսը և սնուցում է աստվածային կյանքը, որը նա ընդունել է սուրբ ջրով վերստին ծնվելու ժամանակ:.

Ժամերգության մասնակցությունը հավատացյալներին նախապատրաստում է նաև սրբերի միասնության մեջ Աստծո արքայությունում ապրելու համար: Նրանով, որ հավատացյալը գալիս է ժամերգության, ապացուցում է, թե ինչ նշանակություն ունի այն Աստծո հետ իր հարաբերության համար: Աստծուն գովաբանելու և երկրպագելու, Աստծո հետ շփվելու նրա պահանջը և նրա հետ լինելու նրա ցանկությունն այնքան ուժեղ է, որ նա միասնություն է կազմում այն մարդկանց հետ, որոնց հետ նա գուցե երբեք շփում չէր ունենա: Նրա հանդիպումը մեր քույրերի և եղբայրների հետ նրան տալիս է հնարավորություն՝ հետաքրքրվել

ուրիշներով, կիսել նրանց ուրախությունն ու հոգսերը: Եվ, քանի որ ոչ ոք կատարյալ չէ, համայնքային կյանքը հավատացյալների համար հնարավոր է դարձնում սովորել իրար ներելը, իրար հետ հաշտվելը և տարբերությունները հաղթահարելը:

Երբ հավատացյալը գալիս է համայնք, նա ընդունում է, որ Աստված բոլոր ներկաներին նույն պատգամն է տալիս - Աստված օգտագործում է նույն խոսքերը, որպեսզի հավատացյալներին ուժեղացնի բոլորովին տարբեր իրավիճակներում: Այս պարզ ուսումնասիրությունը թույլ է տալիս ընկալելու Ավետարանի տեղեկացման ազդեցությունն ու ուժը: Նրանով, որ հավատացյալները միասին և բարձր աղոթում են՝ ,, ներիր մեզ, մեր բոլոր պարտքերը,, - հրապարակային խոստովանում են, որ նրանք բոլորը՝ առանց բացառության, կարիք ունեն ողորմածության: Սուրբ Հաղորդության խորհրդի ընդունումը Տիրոջ գալստյանը նախապատրաստվելու էական բաղադրիչներից է: Սուրբ Ընթրիքը նաև միասնության ընթրիք է՝ Քրիստոսի միասնությունը հավատացյալների հետ, բայց և՝ հավատացյալների միասնությունը միմյանց հետ: Սուրբ Ընթրիքը ունենում է այս բոլոր ազդեցությունները, եթե հավատացյալը նշխարը առաքյալի կամ նրա կողմից լիազորված սպասավորի ձեռքից և համայնքի ներկայությամբ է ընդունում:

Եթե մենք միասին ենք տոնում Սուրբ Ընթրիքը, մեզնից յուրաքանչյուրը կարող է տեսնել, որ Տերը բոլորին նույն ձևով է բարի գալուստ ասում, նրանց նույն սերն է տալիս և նրանց հենց այն է տալիս, ինչ մեզ է տալիս: Այս իմացությունը հրաշալի նախապատրաստություն է գառան հարսանիքի ընթրիքին: Վերջապես պետք է ուշադրություն դարձնել, որ ժամերգության տոնակատարությունը կանոնի համաձայն ավելի շատ հավատացյալների մասնակցություն է ապահովում - ծառայություն մատուցողների և համա-

ծառայող սպասավորների, երգչախմբի երգիչների, երաժիշտների, ողջունելու, դեկորացիաների և մաքրության համար պատասխանատուների: Այս միասնական աշխատանքը հիանալի հնարավորություն է տալիս սովորել միասնաբար ապրելը:

Եզրակացություն՝ Իր գալստյան ժամանակ Տերը մեզ իր հետ է տանելու: Ազատված մեղքից և նրա հետևանքներից՝ մենք կատարյալ միասնություն ենք կազմում Հայր, Որդի և Սուրբ Հոգի Աստծու հետ: Մ՝ ենք կատարյալ միասնություն ենք կազմում նաև միմյանց հետ:

Գալստյանը նախապատրաստվելը կայանում է նրանում, որ միասնություն ենք կազմում Աստծո և միմյանց հետ: Ժամերգության մասնակցությունը այդ նախապատրաստության համար առանձնահատուկ նշանակություն ունի:

Վիրտուալ ժամերգություններն անհերքելի առավելություններ են առաջարկում, բայց դրանք փրկություն բերող նույն ազդեցությունը չունեն, ինչպես այն ժամերգությունը, որին անձնապես ներկա ես: Միասնության գիտակցումը հարսի նախապատրաստության էական բաղադրիչն է:

Նշխարի ընդունումը քարոզիչ սպասավորների և համայնքի բացակայության պայմաններում նույն սրբագործող ազդեցությունը չունի, ինչպես համայնքում Սուրբ Հաղորդությունը անձնապես տոնելիս:

Այսպես, ես իմ պատասխանատվությունն եմ տեսնում այն բանում, որ նորառաքելական բոլոր հավատացյալներին տոնականորեն այն մասին հիշեցնեմ, որ ժամերգության մասնակցությունը Հիսուսի գալստյանը մեր խանապատրաստության էական բաղադրիչն է: Գիտակցորեն և պարբերաբար ժամերգությանը չայցելելը, երբ մենք կարող էինք եկեղեցի գալ, կարող է մեր փրկության համար վնասակար լինել:

Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233 63263 Նոյ -Իզենբուրգ / երմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Տարվա կարգախոսը ոգեշնչում է դիզայներներին

Ձեռքեր և սրտեր ու բնության հրաշք՝ սրանք ամենասիրելի խորհրդանիշներն են լոգոյի մեջ, որով տարածաշրջանային եկեղեցիները 2025-ի տարվա կարգախոսն արտահայտել են պատկերով՝- ,, Ժամանակն է բարին անելու,,:

Հարավ-արևելյան Ասիայից ոճավորված սիրտը ելակետն է կնիքի համար: Քանի որ հմտավորումն այսպիսին է՝ Բարին անելը արմատավորվում է սիրո մեջ և դրանից էլ աճում են արժանիքները, ինչպիսին են՝ կարեկցանքը, ընկերասիրությունը և անձնուրացությունը:

Երկու սիրտ ձևավորում են թիթեռի պատկեր: Նրա ձևափոխումը թրթուրից թևավոր գեղեցկության՝ ծառայում է որպես խորհրդանիշ փոփոխության ու հույսի, և հիշեցնում է այն մասին, որ աճն ու նորացումը միշտ էլ հնարավոր են՝ անկախ նրանից, թե ինչ մարտահրավերների առաջ ես կանգնած:

Ձեռք և սիրտ

Ձեռքերը՝ գործելու և սիրտը՝ բարության համար՝ այս պատկերով են աշխատում երկու տարածաշրջանային եկեղեցիները Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունից: Շրջանային առաքյալի Կոնգոյի ԴՀ հարավ-արևելյան տարածաշրջանում այդ առումով կենտրոնում կանգնած է խաչը՝ որպես նշան այն բանի, որ խոսքը գնում է Հիսուս Քրիստոսով փրկության և նրա գալստյան մասին:

Շատ սրտերով է պատկերված Կոնգոյի ԴՀ արևմտյան շրջանի լոգոն: Դրանում առկա պատասխանն է այս կանչի՝ ,, Այսօր, երբ դուք նրա ձայնն եք լսում, ձեր սրտերը քարացած չեն,,: Ժամացույցը ցույց է տալիս շտապողականությունը: Իսկ երկու ձեռքերը, որոնք միասին մի սիրտ են ձևավորում, ,, պատրաստ են ուրիշների բեռը կրելու և նաև աղոթքով միավորվելու,,:

Տարածաշրջանային եկեղեցիների լոգոները 2025-ի տարվա կարգախոսի վերաբերյալ

Պահել և կարդալ

Երկու ձեռքերը, որոնք միացել և սիրտ են ձևավորել՝ այսպես է ձևավորվել Հարավային Աֆրիկայի կնիքը: ,, Քանի որ Հիսուսն ուզում էր, որ մենք բարին անենք սիրուց ելնելով,,- այսպես է բացատրվում տեսանյութերից մեկում: Գյուների ձևավորման ենթամիմաստները՝ ոսկեդեղինը պետք ուրախություն և երջանկություն ճառագի, լազուր կապույտը պետք է հանգստության և խաղաղության զգացում հաղորդի:

Ձեռքերի այլ իմաստավորումները վերաբերում են երկու այլ շրջանային առաքյալների տարածաշրջանների՝,, խաղաղ-օվկիանոսի արևմուտքը,, ցույց է տալիս Աստվածաշունչ, որը պահվում և կարդացվում է շատերի կողմից: Այս ձևավորումը ուզում է ցույց տալ, թե որտեղից են ծագում բարի գործերի մասշտաբները:

,, Արևելյան Աֆրիկան,, իր լոգոյում ունի երկու ֆիգուր, որոնք պահում և կրում է մի երրորդ անձ: Դա խորհրդանշում է աջակցություն և մտահոգություն մերձավորի հանդեպ:

Ժամանակ և աճ

Ժամանակի գործոնը գլխավոր դեր է խաղում դիզայներների համար: ,,Զամբիայի, Մալավիի և Զիմբաբվեի,, աշխատանքային շրջանը իր լոգոն շրջանակել է թվերով թղթով, որի մեջ սիրտ է գտնվում: Իսկ ,, Հարավային Ամերիկան,, խաչը դրել է որպես ժամանակը ցույց տվող սլաք, որը կանգնած է ժամը մեկի վրա: Դա նկատի ունի այն, որ,, արդեն այս պահն է ժամանակը և ոչ թե՝ այլ, երբ սիրելի Աստված մեզ հորդորում է գործել: Հնդկաստանի և Կանադայի նախագծերի հիմնական գաղափարը աճն է:

Միասին վերցրած 250 նախագիծ է եղել մրցույթին ասիական աշխատանքային տարածաշրջանից, որին կարողացել են մասնակցել երեխաներ և պատանիներ: Վերջում շահեց Մումբայից մի 17-ամյա պատանու ներկայացրածը: Այն ցույց է տալիս ձեռքեր, որոնք աղոթում են և բույսի համար հոգում: Նման ձևով էր նաև Հյուսիսային Ամերիկայի լոգոն՝ մի ֆիգուր հոգում է արևածաղկի համար:

Կերպարը գույների մի ներկապնակից է բաղկացած և ներկայացնում է մարդկային շնորհների բազմազանությունը, որոնք աշխատում են միասնության մեջ: Բացվող արևածաղիկը խորհրդանշում է այն բարին, որն արվում է:

Տեղեկատու

06.07.2025	Լոզան(Շվեյցարիա)
20.07.2025	Կինշասա(Կոնգոյի ԴՀ)
22.07.2025	Մբանզա Նգունգու (Կոնգոյի ԴՀ)
25.07.2025	Բոյա (Կոնգոյի ԴՀ)
27.07.2025	Մբուիջմայի Կոնգոյի ԴՀ)
08.08.2025	Ուազաղուգու(Բուրկինո Ֆասո)
10.08.2025	Նիամեյ(Նիգեր)
24.08.2025	Տիրանա (Ալբանիա)
21.09.2025	Փարիզ (Ֆրանսիա)
03.10.2025	դեռ որոշված չէ (Գաբոն)
05.10.2025	դեռ որոշված չէ (Կամերուն)
12.10.2025	դեռ որոշված չէ(Գերմանիա)
19.10.2025	Քիչեներ(Կանադա)

New Apostolic Church
International